ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2024 թվականի N 40 - Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառված՝ քաղ. Երևան, Թբիլիսյան խճուղի 5, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան, Ուսանողական թաղամաս 4-րդ շենք (ճարտարագիտական քոլեջի հանրակացարան), Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, քաղ. Գորիս, Կոմերիտմիության 2/1 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Արևածագ գյուղի ուսուցչի տուն, 12 փողոց, տուն 1 հասցեներում բնակվող քաղաքացիներին օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրել իրենց կողմից զբաղեցված բնակելի տարածքները՝ համաձայն հավելվածի, համապատասխանաբար սեփականության իրավունքով

և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, հողամասը՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց և սահմանված կարգի համաձայն նվիրատվությամբ տրամադրվող բնակելի տարածքները որպես առանձին գույքային միավոր առանձնացնելուց (անհրաժեշտության դեպքում) հետո ապահովել սույն որոշման հավելվածում նշված բնակելի տարածքների նվիրատվությունը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված հատակագիծը (ցանկում նշված մակերեսների տարբերություններ առաջանալու դեպքում հիմք ընդունել նշված հասցեների սահմանված կարգով գրանցված համապատասխան վկայականի հատակագծի մակերեսը՝ մինչև 3% թույլատրելի շեղումով) հավելվածում նշված բնակիչների կողմից ներկայացվելուց հետո վերջիններիս հետ մեկ տարվա ընթացքում կնքել նվիրատվության պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով, որ պայմանագրերի նոտարական վավերացման և պայմանագրերից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման նվիրառու բնակիչների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունվարի 11-ի N 40 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

NN ը/կ	Բնակելի տարածքի անվանումը և հասցեն	Բնակիչների ազգանունը, անունը, հայրանունը	Անձնագրային տվյալները	Մակե-րեսը (քմ)	Սկզբնական արժեքը (դրամ)	Սեփականության իրավունքով կամ ընդհանուր սեփականության իրավունքով տրվող	Հողամասը
1.	Քաղ. Երևան, Թբիլիսյան խճուղի 5 (Երևանի պետ. էլեկտրատեխնի-կական քոլեջի հանրակացարանա-յին մասնաշենք) հանրակացարան, բն. 213	Մարկոսյան Լուիզա Գևորգի Լուլուկյան Արտակ Ալբերտի	AU0244649, տրված՝ 26.04.2021 թ., 004-ի կողմից AT0552757, տրված՝ 31.08.2020 թ., 004-ի կողմից	17.9	52,787.1	ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, հավասար բաժիններով	ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով
2.	Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան, Ուսանողական թաղամաս 4-րդ շենք (ճարտարագիտական քոլեջի	Բաղալյան Նորա Մնացականի	AV0622013, տրված՝ 31.01.2023 թ., 019-ի կողմից Ծնված՝ 24.07.2018 թ.	16.6	190,140.55	ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, հավասար բաժիններով	ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝

	հանրակացարան), 405ա բնակարան	Բոզոյան Ռադիկ Ռազմիկի Բոզոյան Թինա Ռազմիկի	Ծնված՝ 23.03.2020 թ.				համապատասխան բաժնեմասերով
3.	Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան, Ուսանողական թաղամաս 4-րդ շենք (ճարտարագիտական քոլեջի հանրակացարան), 712ա բնակարան	Հովհաննիսյան Դոնարա Դավթի	AS0424584, տրված՝ 14.11.2018 թ., 019-ի կողմից	18.9	216,485.33	սեփականության իրավունքով	ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով
4.	Սյունիքի մարզ, քաղ. Գորիս, Կոմերիտմիության 2/1 հասցեի հանրակացարան, բն. 418	Գյուլգունց Մերի Արթուրի Աթաբեկյան Ալեն Միերի Աթաբեկյան Աիդա Միերի	AL0372266, տրված՝ 04.08.2023 թ., 032-ի կողմից Ծնված՝ 11.03.2011 թ. Ծնված՝ 09.10.2012 թ.	33.6	393,699.6	ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, հավասար բաժիններով	ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով
5.	Լոռու մարզ, Արևածագ գյուղի ուսուցչի տուն, 12 փողոց, տուն 1, բն. 2	Գևորգյան Դավիթ Խորենի Գևորգյան Խորեն Հարությունի	AU0605927, տրված՝ 03.02.2022 թ., 055-ի կողմից AV0343260, տրված՝ 28.07.2022 թ., 055-ի կողմից	65.42	7,188.00	ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, հավասար բաժիններով	ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝

		Գևորգյան Հարություն Խորենի	AP0590402, տրված՝ 04.10.2016 թ., 055-ի կողմից				համապատասխան բաժնեմասերով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ